ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՋԿ–ԳՀԱՇՁԲ-19/4-Ն

ք. Երևան «18» հոկտեմբերի 2019թ.

«Ջրային կոմիտե», ի դեմս Կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ս. Զատիկյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Մոդուլ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Գասպարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ոռոգման համակարգերում ջրաչափական սարքավորումների տեղադրման համար նախագծահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների։

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը։ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը։

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին։

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ։

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 41 280 000 (քառասունմեկ միլիոն երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն

իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Ջրային կոմիտե	«Մոդուլ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	Ք. Երևան, Ն.Զարյան 22, տարածք 3 Է.
ՖՆ վարչություն	հասցե info@modul.am
Հ/Հ 900011028256	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ Աշտարակ մ/ճ
ՀՎՀՀ 02555816	Հ/Հ 11500404281400
Կոմիտեի գլխավոր քարտուղարի	ՀՎՀՀ 05020542
պաշտոնակատար	հեռ. 011201511
	Տնօրեն
Ս. ՉԱՏԻԿՅԱՆ	Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 18 » հոկտեմբերի 2019թ. կնքված
ՋԿ–ԳՀԱՇՁԲ-19/4-Ն ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը**
1	71241200/19	նախագծերի պատրաստում ծախսերի գնահատում ***կարդաստրն	դրամ	41 280 000	41 280 000	1	ՀՀ տարածքն նախագծերը պետք է ներկայացվեն Վարդենյաց 13ա	մինչև- 25.12.2019թ.

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ոռոգման համակարգերում ջրաչափական սարքավորումների տեղադրման համար նախագծահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների

Ընդհանուր դրույթներ

Չափաբաժին 1

Անվանումը.
<<Ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում կարգավարական/դիսպետչերական հսկողության և տվյալների ձեռքբերման (Supervisory Control And Data Acquisition՝ այսուհետ SCADA) համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման համար, նախագծահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ:
Նախագծի նպատակը, շրջանակը և բովանդակությունը.
Նախատեսվող նախագծի մշակումը պայմանավորված է հանրապետությունում ոռոգման ջրի փաստացի օգտագործված ծավալների հաշվառմամբ, դրան համարժեք հողօգտագործողների կողմից վճարումների, ինչպես նաև բնագավառում կորուստների կրճատման ապահովմամբ:
Ջրաչափական սարքավորումներով կահավորումը նպատակ է հետապնդում մայր և երկրորդ կարգի ոռոգման ջրանցքների ջրբաժան հանգուցային կետերում ջրերի հաշվառումն ապահովելու և այդ տվյալները առցանց կառավարման կենտրոն, ինչպես նաև օգտատերերին փոխանցելու համար:
Ջրային Կոմիտեն նպատակ ունի իրականացնել ջրային ռեսուրսների կայուն կառավարում և ապահովել ջրօգտագործողների (այդ թվում ՋՕԸ-երի) կողմից առաջադեմ, նորագույն տեխնոլոգիաների կիրառում շահագրգիռ կողմերի հետ համագործակցության միջոցով: Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարումն իրականություն դարձնելու գլխավոր նախապայմաններից է ջրային ռեսուրսների հաշվառումը՝ մոնիթորինգի ավտոմատացված համակարգի ներդրման միջոցով, որը կնպաստի ջրի արդյունավետ օգտագործմանը, խնայմանն ու ջրօգտագործողների պահանջների բավարարմանը:
Ջրային ռեսուրսների կայուն կառավարումն ապահովող երկարաժամկետ միջոցառումների իրականացման

նպատակով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության տարածքում ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում իրականացնել ջրաչափություն՝ հոսքաչափ և/կամ ջրի մակարդակաչափ սարքավորումների միասնական համակարգի տեղադրմամբ: Ծրագրի այս փուլում SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման և շահագործման միջոցառումների շրջանակներում նախատեսվում է իրականացնել ջրաչափական սարքավորումների տեղադրման համար նախագծահաշվային փաստաթղթերի կազմում և փորձաքննության եզրակացության տրամադրում:
Ջրաչափության տվյալները թույլ կտան մայր և երկրորդ կարգի ջրանցքների մակարդակում հաշվառել ջրաքանակները առցանց ռեժիմում, ինչը հնարավոր կդարձնի ոռոգման համակարգի օպերատիվ և արդյունավետ կառավարումը: Մասնավորապես, հնարավոր կլինի իրականացնել՝

- ջրօգտագործողներին մատակարարվող ջրի ծավալի օպերատիվ հաշվառում.
- կրճատել ջրակորուստները.
- կանխել չհաշվառվող ջրերի և կորուստների չափերի վերաբերյալ շահագրգիռ կողմերի անհամաձայնությունները.
- ջրօգտագործողների կողմից հավաքագրումների մակարդակի բարձրացում,
- <<Ջրառ>> ՓԲԸ - ջրօգտագործողների ընկերություն - ջրօգտագործող իրավահարաբերությունների ջրերի հաշվառման մասով հստակեցում.
- ոռոգման ջրի մասնակցային և թափանցիկ կառավարում.
- ոռոգման ջրի կառավարումն իրականացնել ջրբաշխ բոլոր մակարդակի պատասխանատու կազմակերպությունների իրական ժամանակում ներգրավվածությամբ, ինչը թույլ կտա արագ արձագանքել ջրօգտագործողների պահանջներին.
- հստակեցնել ՋՕԸ-երին տրվող ջրաքանակները.
- ունենալ ՋՕԸ աշխատանքները վերահսկելու չափելի մեխանիզմներ.
- ջրօգտագործողներին հիմնավոր կերպով ներկայացնել մատակարարվող ջրաքանակի և դրա համար պահանջվող վարձավճարի չափը.
- արդյունավետ օգտագործել ոռոգման համար նախատեսված ջրաքանակները:

Տեխնիկական պայմանները.

Ջրային Կոմիտեի կարիքների համար ջրաչափության փաստացի վիճակի, տեխնիկական հագեցվածության ու արդյունավետության գնահատման, ինչպես նաև նորագույն տեխնոլոգիաներով հագեցած ջրաչափական միասնական ցանցի նախագծանախահաշվային փաստաթղթերի ակնկալվող արդյունքներն ստանալու նպատակով, ըստ փուլերի, առաջադրվում են հետևյալ տեխնիկական պայմանները՝

Փուլ 1.

Ջրանցքներում տեղադրվող ջրաչափական սարքավորումների ընտրության համար Խորհրդատուն պետք է հետազոտի վերջիններիս ձևաչափական բնութագրիչները, յուրաքանչյուր տեղամասում և տեղորոշի դրանց տեղադրման վայրի ճշգրիտ կոորդինատները: Ջրանցքի երկայնքով ներկայացվող բնութագրիչների գրանցման միջակայքը պայմանավորված պետք է լինի ջրանցքից վերցվող ջրի քանակով:
Ջրաչափերի տեղի ընտրության համար խորհրդատուն պետք է հաշվառի ջրընդունիչ և բաժանարար կառույցները և նշի դրանց տեղադիրքը (կոորդինատները), ձևը և չափերը:
Առաջադրանքի այս փուլում Պատվիրատուին պետք է ներկայացվի ամփոփ վերլուծական հաշվետվություն, որում ներկայացված կլինեն ջրաչափական հանգույցի տեղադիրքի ընտրության համար անհրաժեշտ և բավարար բոլոր տվյալներն՝ ըստ ՋՕԸ-երի և Ջրառ ՓԲԸ-ի: Ինչպես նաև, հաշվետվությանը կից պետք է ներկայացվեն այս փուլի ընթացքում կատարված ուսումնասիրությունների արդյունքներն՝ աղյուսակային (SQL, Excel) և տարածական (GIS) բազաների տեսքով:

Փուլ 2.

Ջրանցքներում առկա ջրաչափական սարքավորումները կարող են կողմնորոշիչ նշանակություն ունենալ նախատեսվող նոր ջրաչափերի տեղադիրքի ընտրության հարցում: Ուստի, Կատարողը պետք է ուսումնասիրի և համապարփակ տեղեկատվություն ներկայացնի առկա ջրաչափական համակարգի, դրանց տեխնիկական վիճակի և ջրաչափական դիտակետերը ստանդարտներին համապատասխան նորմալ շահագործական վիճակն ապահովող անհարաժեշտ աշխատանքային ծավալների վերաբերյալ: Մասնավորապես, տեղեկատվությունը պետք է ներառի (բայց չսահմանափակվի) ջրաչափ սարքավորման տեսակը, տվյալների ավտոմատ գրանցման և հեռահար փոխանցման հնարավորությունները:
Առաջադրանքի այս փուլում, ըստ ՋՕԸ-երի և Ջրառ ՓԲԸ-ի, պետք է ներկայացվի ամփոփ վերլուծական հաշվետվություն առկա ջրաչափերի և առաջարկվող միասնական մոնիթորինգի համակարգի համատեղելիության հնարավորության վերաբերյալ: Այս փուլում, նույնպես, հաշվետվությանը կից Պատվիրատուին պետք է ներկայացվի կատարված ուսումնասիրությունների արդյունքների աղյուսակային

(SQL, Excel) և տարածական (GIS) ամբողջական տվյալների բազան:

Փուլ 3.

Այս փուլում Խորհրդատուն ներկայացնում է ջրաչափական դիտակետերի օպտիմալ տեղաբաշխման նախագծային փաթեթը՝ գծագրեր, տեխնիկական մասնագրեր, աշխատանքների ծավալներ և նախահաշիվ:

1. Գծագրական, քարտեզագրական աշխատանքները պետք է կատարվեն ժամանակակից քարտեզագրական (AutoCAD, ArcGIS և այլ) ծրագրերով և հիմնված լինեն ճարտարագիտական հետազոտությունների ու տարածական վերլուծությունների վրա: Գծագրերը պետք է ներկայացնեն բավարար աստիճանի մանրամասնություններ և տեղեկատվություններ, որոնք կապահովվեն մոնիթորինգային համակարգի տեղադրման բարձր որակ և աշխատանքների ծավալի ճշգրիտ որոշում:

2. Տեխնիկական մասնագրերը պետք է ներկայացվեն ըստ ՋՕԸ-երի, արտահայտեն ջրաչափերի տեղադրման առաջնահերթությունները և այն մանրամասնությունները, որոնք բացակայում են աշխատանքային գծագրերում:

3. Աշխատանքների կատարման պլանն ընդգրկում է ոռոգման շրջանի տևողությունը, շինարարության փաստացի ժամանակը և մեթոդը: Ելնելով այն հանգամանքից, որ Ջրային կոմիտեն նախատեսում է ջրաչափական համակարգի արդիականացումն իրականացնել փուլային տարբերակով, ապա աշխատանքների պլանավորում կատարելիս Խորհրդատուն պետք է ջրաչափական դիտակետերի տեղադրման հերթականությունը ներկայացնի ըստ առաջնահերթությունների՝ հիմք ընդունելով Ջրային կոմիտեի պահանջները և նպատակները:

4. Համաձայն ջրաչափական դիտակետերի տեղադրման աշխատանքների պլանի, Խորհրդատուն պետք է կազմի կատարվող աշխատանքների ծավալների ցուցակ և նախահաշիվներ ըստ՝ ՋՕԸ-երի և Ջրառ ՓԲԸ-ի, ըստ տեղադրման առաջնահերթության ընտրված խմբերի և ըստ ամբողջական համակարգի:

Հետագայում, ոռոգման մայր և երկրորդ կարգի ջրանցքների վրա, SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման և շահագործման նպատակով, նախագծի իրականացման ընթացքում, Կատարողը պետք է հաշվի առնի նաև հետևյալ լրացուցիչ տեխնիկական պայմանները.

- ապահովվի ոռոգման համակարգերի նախատեսված դիտակետերը համապատասխան ջրաչափական սարքավորումներով կահավորումը,
- ապահովվի ջրաչափական դիտակետերի վերանորոգման, գործող նորմերին համապատասխան կարգաբերումն ու կորերի ստեղծումը,
- ապահովվի տեղադրված սարքավորումների անվտանգությունը,
- ապահովվի սարքավորումների տվյալները SIM քարտի միջոցով, ինտերնետային կապով, սերվերին հաղորդելու հնարավորությունը,
- սարքավորումները պետք է հնարավորություն ունենան հեռահար կերպով փոխանցել տվյալներ՝ սարքի անվանման, ամիս-ամսաթվի, ժամի, կետի կոորդինատների, ջրի մակարդակի և մարտկոցի լարման վերաբերյալ,
- սարքավորումները պետք է ապահովեն տվյալների ներմուծում և արտահանում, հոսքի կորի գրաֆիկական խմբագրում, անհրաժեշտ ահազանգեր՝ մարտկոցի վիճակի, GSM-ի ազդանշանի և համակարգիի աշխատանքի խափանման հետ կապված, քարտեզի վրա սարքի տեղակայման հասցեի, կոորդինատների և այլ պարամետրերի ցուցադրում ըստ օգտագործողի ցանկության,
- սարքավորումները պետք է հնարավորություն ունենան առնվազն 15 րոպեն մեկ տվյալ չափելու, առնվազն կես ժամը մեկ տվյալ հաղորդելու և ապահովի մեկ լիցքավորմամբ սարքի մարտկոցի հնարավորինս առավելագույն անխափան աշխատաժամանակը,
- սարքավորումները հնարավորություն պետք է ունենան, անհրաժեշտության դեպքում, տվյալները փոխանցել այլ սերվերի և պահպանել MSSQL ֆորմատով,
- համակարգի ծրագրային փաթեթը պետք է ապահովի ըստ կորերի և աղյուսակների (Q(h) կապ) մուտքագրում և ջրի ելքի ցուցադրում՝ համաձայն ջրի մակարդակի և կորի տվյալների,
- սարքավորումները պետք է ապահովեն կարգավորումների փոփոխում հեռահար տարբերակով,
- պետք է ապահովվի երաշխիքային և ետերաշխիքային սպասարկում սպասարկում,
- ապահովվի սարքավորումները շահագործող ընկերությունների (Ջրառ, ՋՕԸ) անձնակազմի ուսուցանումը,
- սարքավորումները պետք է հնարավորություն ունենան չափելու և տվյալներ փոխանցելու նաև ջրանցքի հատակին եղած տիղմի, ավազի և ջրաբերուկների շերտի բարձրության վերաբերյալ,
- Միաժամանակ նախատեսվող սարքավորումների ավտոմատ համակարգը համացանցի միջոցով պետք է ապահովի, որպեսզի՝ տվյալներն արտաբերվեն հիմնականում հայերեն լեզվով, դիտակետերը երևան ըստ իրենց անվանումներով՝ հերթականությամբ և խմբավորված համապատասխան տեղամասերով, հնարավոր լինի որոնման միջոցով արագ գտնել անհրաժեշտ դիտակետը, նախորդ 24 ժամվա տվյալների միջին արժեքը ժ. 9:00-ի դրությամբ՝ ըստ դիտակետերի, ավտոմատ կերպով երևան այն դիտակետերը, որտեղ որ ինչ-որ ժամի տեղեկատվությունը բացակայում է կամ բացասական է,

ցանկացած դիտակետի համար ցանկացած օրվա(24 ժամ) ջրի հոսքի թվերի դիագրամման նայելու և տպելու հնարավորություն և տվյալների դուրս բերելու հնարավորություն .xlsx ֆորմատով:

Կատարողը աշխատանքների իրականացման ընթացքում պետք է համագործակցի նախագծվող տարածքում ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքները սպասարկող ՋՕԸ-երի և <<Ջրառ>> ՓԲԸ-ի հետ:

Պատվիրատուին հանձնվող նյութերը.

Նախատեսվող աշխատանքներն իրականացնող կազմակերպությունը հետազոտական և նախագծանախահաշվային աշխատանքների կատարման արդյունքում պետք է ներկայացնի՝

- **Փուլ 1.** ՀՀ տարածքում մայր և երկրորդ կարգի ջրանցքների տեղաբաշխումը GIS ձևաչափով, տեղեկատվություն (հաշվետվություն) ցանցի կառուցվածքի և ձևաչափության վերաբերյալ:
- **Փուլ 2.** ՀՀ տարածքում մայր և երկրորդ կարգի ջրանցքների վրա առկա ջրաչափական սարքավորումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ GIS ձևաչափով:
- **Փուլ 3.** Նոր տեղադրվող ջրաչափական համակարգի բաշխման նախագծային և նախահաշվային փաստաթղթերը, փորձաքննության եզրակացությունը:

Յուրաքանչյուր փուլի ավարտից հետո անհրաժեշտ է ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ:

Նախագծի իրականացման արդյունքում բերված տվյալները պետք է ներկայացվեն կիրառելով հետևյալ չափման միավորները.

- ջրանցքների ձևաչափական տվյալների համար՝ մետր կամ սանտիմետր,
- ջրանցքներում ջրի մակարդակի համար՝ սանտիմետր,
- ջրամբարներում ջրի մակարդակի համար՝ մետր,
- ջրանցքներում ջրի հոսքի արագության համար՝ մ/վ կամ լ/վ,
- ջրանցքներում ջրի ելք և պոմպակայանների արտադրողականության համար՝ լ/վ կամ մ³/վ,
- ԵՏՀ (GIS) համակարգով քարտեզագրական նյութերը պետք է ներկայացվեն համաշխարհային WGS 84 բաց կոորդինատական համակարգով,
- նախահաշվային արժեքները՝ ՀՀ դրամ:

Նախատեսվող աշխատանքների իրականացման համար, Պատվիրատուն կատարողին է տրամադրում, ՀՀ տարածքում, <<Ջրառ>> ՓԲԸ-ի և ջրօգտագործող ընկերությունների կողմից սպասարկվող մայր և երկրորդ կարգի ջրանցքների սխեմաները՝ առաջարկվող ջրաչափական դիտակետերի նախնական տեղադիրքերով:

Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ կատարողը պարտավոր է՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,
2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,
3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,
4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,
5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը
6) կատարվող աշխատանքների երաշխիքային ժամկետները:

- Տեխնիկական մասնագիր – 5 օրինակ,
- գծագիր – 5 օրինակ,
- աշխատանքների ծավալների ամփոփագիր – 5 օրինակ,
- նախահաշիվ – 5 օրինակ:

Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմված լինեն հայերեն և ռուսերեն լեզուներով:

Նխագծերը Պատվիրատուին ներկայացվում են նաև էլեկտրոնային կրիչով՝ հայերեն և ռուսերեն լեզուներով:

Բոլոր գծագրերը պետք է պատրաստվեն՝ օգտագործելով համակարգչային CAD ծրագիրը և համապատասխանեն A0 կամ A1 չափին:

Բոլոր փաստաթղթերն ու զեկույցները պետք է լինեն A4 ձևաչափով տպագրված:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ վարչություն
Հ/Հ 900011028256
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար

Մ. ՉԱՏԻԿՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Մոդուլ» ՍՊԸ
Ք. Երևան, Ն.Զարյան 22, տարածք 3 էլ. հասցե
info@modul.am
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ Աշտարակ մ/ճ
Հ/Հ 11500404281400
ՀՎՀՀ 05020542
հեռ. 011201511
Տնօրեն

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«18» հոկտեմբերի 2019թ. կնքված
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/4-Ն ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ
դրամ

Աշխատանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**			
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/19	նախագծերի պատրաստում ծախսերի գնահատում	50% 20 640 000	100% 41 280 000	100% 41 280 000	**41 280 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ վարչություն
Հ/Հ 900011028256
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար
Ս. ՋԱՏԻԿՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Մոդուլ» ՍՊԸ
Ք. Երևան, Ն.Զարյան 22, տարածք 3 էլ. հասցե
info@modul.am
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ Աշտարակ մ/ճ
Հ/Հ 11500404281400
ՀՎՀՀ 05020542
հեռ. 011201511
Տնօրեն
Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«18» հոկտեմբերի 2019 թ. կնքված
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/4-Ն ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«18» հոկտեմբերի 2019թ. կնքված
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/4-Ն ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն